



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«13» 09 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 76

Ձեռնարկողը՝

<<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ>>

Ք. Երևան, Կ. Ուլենցու 31

Գործունեությունը՝

**Գյումրու <<Կումայրի>> պատմական կենտրոնի
փողոցների վերականգնման աշխատանքների
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման
հաշվեկտրություն**

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի
տնօրենի Ժ/պ՝**



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 76

<< 13 >> 09 2018թ.

Գյումրու «Կումայրի» պատմական կենտրոնի փողոցների վերականգնման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	<<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ>> ՀՏՀՀ
Նախագծող՝	<<Տրանսնախագիծ>> ԲԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության (ՇՄԱԳ) հաշվետվություն /Բ կատեգորիա/, Նախագծային փաստաթղթեր և գծագրական նյութեր:
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզ

«Գյումրու Կումայրի պատմական կենտրոնի փողոցների վերականգնում» ենթաձրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել.

- (I) Ջիվանու հրապարակի, Շիրազի փողոցի, Վարպետաց, Ջիվանու և Ղորղանյան փողոցների՝ Շիրազի և Գայի փողոցներով պարփակված հատվածի հիմնանորոգում և լուսավորում,
- (II) Վարպետաց, Աբովյան և Ղորղանյան փողոցների՝ Ռուստավելի և Ֆուրմանովի փողոցներով պարփակված հատվածի հիմնանորոգում և լուսավորում,
- (III) Գայի փողոցի հիմնանորոգում և Վարդանանց հրապարակի վերանորոգում և լուսավորում վերականգնման աշխատանքների համալիրը:

Գոյություն ունեցող փողոցները և հրապարակները՝ բացառությամբ Ղորղանյան փողոցի Գայի և Շիրազ փողոցներով պարփակված հատվածը, որը ծածկված է բազալտե չորսվակասալ քարերով ունեն ասֆալտ-բետոնային ծածկ, որը չի համապատասխանում գոյություն ունեցող նորմերին: Փողոցների և հրապարակների մայրերի ծածկույթը հիմնականում քայքայված է, իսկ մայրերի որոշ հատվածներ սարքավորված են բնակիչների կողմից: Մայրերի բազալտե եզրաքարերը նույնպես քայքայված են և ենթակա են բարեկարգման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Շիրակի մարզի Գյումրու քաղաքում՝ «Կումայրի» արգելոց պատմական կենտրոնում:

Տեղանքի ռեիլեֆը հարթավայրային և նախալեռնային է: Բարձրության միջին տատանվում են 1540÷1550մ տիրույթում: Ռեիլեֆի ծագումային տիպը կոտլանոմային է, ներկայացված լճա-այլուվիլիալ նստվածքներով, մասամբ հրաբխային է: Բարեկարգվող



տեղամասի ինժեներատեխնիկական պայմանները գնահատվում են բարենպաստ շինարարական աշխատանքների իրականացման համար: Նախագծվող տարածքում բացակայում են շինարարության և կառուցվածքների վրա ազդող բնական երևույթները (սողանքներ, կարստ, փլուզումներ և այլն):

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի, բարեկարգման ենթակա տարածքը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում, գրունտների հնարավոր արագացման առավելագույն մեծությունը կազմում է $A_{max} = 0.4g$ և ունի 9 և ավելի բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

Համաձայն հիդրոտեխնիկական գրականական տվյալների, ստորգետնյա ջրերի վերին մակարդակը գտնվում է 3.0-3.5մ խորության վրա, մակարդակը ենթակա է փոփոխման, որը պայմանավորված է մթնոլորտային տեղումների և մակերևութային ջրերի հաշվեկշռով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնութագրվող տեղանքը գտնվում է զարգացած քաղաքային միջավայրում և խիստ ուրբանացված է, ուստի նախատեսվող գործունեության տարածքում բացակայում են էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ, ինչպես նաև միգրացիոն ուղիներ:

Բարեկարգվող փողոցների մայթերում աճում են ծառեր և թփեր, որոնք նախատեսվող գործունեությանը չեն խանգարում և համաձայն նախագծի պահպանվելու են:

Գործունեության համար ընտրված Շիրագի փողոցն ունի 680.0մ երկարություն, որը նախատեսվում է ասֆալտապատել (ընդհանուր 3290.0մ² մակերեսով), եզրային մասերը սալապատել 400մմ լայնությամբ բազալտե սալերով (ընդհանուր 573.0մ² մակերեսով), իսկ փողոցին հատող 5 խաչմերուկները՝ սալապատել գրանիտե չորսվակասալերով (ընդհանուր 665.0մ² մակերեսով) և եզերել բազալտե 400մմ սալերով (ընդհանուր 103.0մ² մակերեսով):

Վարպետաց և Ղորղանյան փողոցներից յուրաքանչյուրն ունի 150.0մ երկարություն և համաձայն նախագծի՝ նախատեսվում է սալապատում գրանիտե հավասարահատ չորսվակասալերով (ընդհանուր 1625.0մ² մակերեսով), ինչպես նաև եզերել բազալտե 400մմ սալերով (ընդհանուր 255.0մ² մակերեսով):

Զիվանու փողոցը (ընդհանուր 576.0մ² մակերեսով) և Զիվանու հրապարակը (ընդհանուր 2700.0մ² մակերեսով) նախատեսված է ասֆալտապատել, իսկ Զիվանու փողոցն և հրապարակի մայթերը՝ սալապատել ջնարակապատ բետոնե սալերով (ընդհանուր 1127.0մ² մակերեսով), եզերել 400մմ բազալտե սալերով (ընդհանուր 122.0մ² մակերեսով): Վերը նշված մյուս բոլոր փողոցների մայթերը նախատեսվում է սալապատել բազալտե չորսվակասալերով (ընդհանուր 1900.0մ² մակերեսով) և եզերել բազալտե 400մմ սալերով (ընդհանուր 622.0գմ): Լուսավորությունը նախատեսվում է իրականացնել լուսավորության հենասյուներով և LED տիպի լուսատուներով (97 հատ):

Վերը նշված բոլոր փողոցների ճանապարհային ծածկույթը նախատեսվում է իրականացնել ասֆալտից (ընդհանուր 2700.0մ² մակերեսով), իսկ մայթերը՝ սալապատել գունավոր բետոնե սալերով (ընդհանուր 1550.0մ² մակերեսով) և եզերել 400մմ բազալտե սալերով (ընդհանուր 270.0մ² մակերեսով): Լուսավորությունը նախատեսվում է իրականացնել լուսավորության հենասյուներով և LED տիպի լուսատուներով (27 հատ):

Զիվանու հրապարակի, Շիրագի փողոցի, Վարպետաց, Զիվանու և Ղորղանյան փողոցների՝ Շիրագի և Գայի, ինչպես նաև Վարպետաց, Աբովյան և Ղորղանյան փողոցների՝ Շիրագի և Ֆուրմանովի փողոցներով պարփակված հատվածների, հիմնանորոգման, լուսավորման և կահավորման շրջանակում նախատեսվում է իրականացնել:

- բոլոր փողոցներում ամբողջովին վերակառուցել ճանապարհային պատվածքի և մայթերի պատվածքի բոլոր շերտերը,

- բնակիչների տների մուտքային հատվածների կազմակերպում և վերանորոգում,



- մայթերում թեքահարթակների իրականացում,
- ճարտարապետական փոքր ձևերի տեղադրում (նստարաններ, աղբամաններ),
- ճանապարհների գծանշում և ճանապարհային նշանների տեղադրում:

Գայի փողոցի հիմնանորոգման և Վարդանանց հրապարակի վերանորոգման, լուսավորման և կահավորման շրջանակում նախատեսվում է իրականացել.

- ամբողջովին վերակառուցել Գայի փողոցի ճանապարհային պատվածքի բոլոր շերտերը,
- Վարդանանց հրապարակում հիմնանորոգել ճանապարհային ասֆալտի վերին շերտը,
- վերակառուցել Գայի փողոցի մայթերի պատվածքի բոլոր շերտերը,
- վերակառուցել Վարդանանց հրապարակը հարող 2 մայթերի պատվածքի բոլոր շերտերը,
- բնակիչների տների մուտքային հատվածների կազմակերպում և վերանորոգում,
- մայթերում թեքահարթակների իրականացում և խարխված հենապատերի վերականգնում,
- ճարտարապետական փոքր ձևերի (նստարաններ, աղբամաններ) նախատեսում,
- ճանապարհների գծանշում և ճանապարհային նշանների տեղադրում:

Նախատեսվող աշխատանքների ծավալները կկազմեն՝ Ճանապարհային ծածկույթն իրականացնել ասֆալտից (ընդհանուր 12415.0մ² մակերեսով): Վերը նշված բոլոր փողոցների և հրապարակի մայթերը նախատեսվում է սալապատել գունավոր, քնարակապատ բետոնե սալերով (ընդհանուր 4100.0մ² մակերեսով): Գայի փողոցի մայթերը եզերել 400մմ բազալտե սալերով (ընդհանուր 188.0մ² մակերեսով): Լուսավորությունը իրականացնել լուսավորության հենասյուներով և LED տիպի լուսատուներով (39 հատ):

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շինարարական հրապարակ/ներ ստեղծում չի նախատեսվում, հաշվի առնելով փողոցների նեղ լինելու հանգամանքը, երթևեկության և հետիոտնային անցումների կազմակերպման, մասնավոր տների մոտեցման անհրաժեշտությունը:

Շինարարական աշխատանքների համար կընտրվեն աշխատանքային տեղամասեր, կիրականցվեն անվտանգության միջոցառումներ, ինչպիսիք են՝ վերականգնվող փողոցներում ճանապարհային նշանների տեղադրում (համաձայն Ճանապարհների վերակառուցման և երթևեկության կազմակերպման սխեմայի), ըստ անհրաժեշտության կոմունիկացիաների վերատեղադրում և տեղափոխում, միացում գոյություն ունեցող կոմունիկացիաներին: Նախատեսվող աշխատանքները կկազմակերպվեն այնպես, որ աշխատանքների ընթացքում վերականգնվող փողոցներում կապահովի հետիոտնային անցումներ, փողոցների մասնակի շահագործում, շինարար-կապալառուի, համայնքի և ճանապարհային ոստիկանության հետ համատեղ կմշակվի երթևեկության կառավարման պլաներ: Վերակառուցման աշխատանքները նախատեսվում են իրականացնել 150 օրյա ժամանակահատվածում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում ջրցանի համար օգտագործվող ջուրը դասվում է անվերադարձ ջրօգտագործման շարքին, որի արդյունքում հոսքաջրերի առաջացում չի կանխատեսվում: Անհրաժեշտ ջրաքանակը վերակառուցվող տարածք կհասցվի ջրցան մեքենաների միջոցով:

Քանի որ աշխատանքները իրականացվելու են քաղաքային զարգացած միջավայրում և հնարավոր չէ շինճամբարներում ժամանակավոր սեպտիկ հորերի տեղադրում, շինկազմին օգտվելու է հանրային/ընդհանուր օգտագործման կոյուղուց:



Գյուճարու «Կուճարի» պատմական կենտրոնի փողոցների վերակառուցման աշխատանքների արդյունքում ակնկալվում են միջին աստիճանի բացասական ազդեցություններ շրջակա միջավայրի վրա, որոնք կլինեն ժամանակավոր՝ պայմանավորված շինարարության տևողությամբ և տեղայնացված բնույթի՝ շինարարական տեղամասի սահմաններում: Հիմնականում ակնկալվում է օդային ավազանում փոշու և այլ վնասակար նյութերի կոնցենտրացիաների ժամանակավոր ավելացում, որոնց մակարդակները կկառավարվեն շինարար կապալառուի կողմից մեղմացնող միջոցառումների պատշաճ իրականացմամբ, որոնց համապատասխանությունը կվերահսկվի պարբերաբար մոնիթորինգային այցերի ընթացքում:

Սոցիալական ազդեցությունների տեսանկյունից կանխատեսվում են «Կուճարի» պատմական կենտրոնում երթևեկության դանդաղեցումներ և ճանապարհային փոփոխություններ՝ պայմանավորված շինարարական մեքենասարքավորումների շահագործմամբ և շինճամբարների ժամանակավոր կազմակերպմամբ: Շինարարական տեխնիկայի շահագործումը կբերի աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացման: Հաշվի առնելով աշխատանքների բնույթը, ծավալը և տևողությունը, ակնկալվում են նվազագույն ազդեցություններ շինարարական հրապարակի հարևանությամբ առկա ֆիզիկական միջավայրի, կենդանական և բուսական աշխարհի վրա:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են 13519.0մ³ շին թափոններ, որից 1351.9մ³ կկազմի քերման եղանակով հեռացվող ասֆալտը, իսկ 12167.1մ³ ավելցուկային գրունտը: Հեռացվող գրունտային զանգվածը նախատեսվում է օգտագործել 9.0կմ հեռավորության վրա գտնվող Մայիսյան-Հացիկ ճանապարհին կից առկա դաշտամիջյան աղբի ծածկման համար, իսկ քերման եղանակով հեռացված ասֆալտե զանգվածը որպես երկրորդային հումք նախատեսվում է վերամշակել և օգտագործել ասֆալտապատման աշխատանքներում՝ հաշվի առնելով թափոնի վտանգավորության և ռեսուրսների արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած թափոնները տեսակավորված կպահվեն փողոցի բարեկարգվող հատվածներում կամ բարեկարգվող հրապարակներում թափոնների համար հատկացված վայրում՝ ժամանակավոր կույտերի տեսքով, և պարբերաբար կհեռացվեն տեղամասից՝ վերը ներկայացված միջոցառումներին համապատասխան եղանակով:

Շինարարական աշխատանքների ընթացքում կանխատեսվում են «Կուճարի» պատմական կենտրոնում երթևեկության դանդաղեցումներ և ճանապարհային փոփոխություններ՝ պայմանավորված շինարարական մեքենա-սարքավորումների շահագործմամբ և շինճամբարների կազմակերպմամբ:

Շինարար կապալառուի կողմից՝ համայնքի և ճանապարհային ոստիկանության հետ համատեղ կմշակվեն երթևեկության և տրանսպորտի կառավարման պլան, որտեղ կսահմանվեն մուտքի և ելքի ուղիները, անվտանգության միջոցառումները և երթևեկության ուղիները, հետիոտնային ուղիները:

Ենթաձրագրի իրականացման շինարարական բոլոր փուլերում կիրականացվի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների բացառմանը, մեղմացմանը և նվազեցմանն ուղղված հետևյալ մեղմացնող միջոցառումների ծրագիրը.

- տեղեկատվության հրապարակում և հանրային լսումներ,
- շինարարական աղբի կանանոնավոր հեռացում,
- շինարարական հրապարակի ջրցանում և արտանետումների մակարդակների կառավարում ՀՀ թույլատրելի նորմերին համապատասխան,
- շինարարական նյութերի ձեռք բերում լիցենզավորված մատակարարից, իսկ ընդերքօգտագործման դեպքում կապալառուն պարտավորվում է ձեռք բերել համապատասխան հանքարդյունահանման թույլտվություն,



- աղմկահարուց աշխատանքները իրականացնել թույլատրելի մակարդակների սահմանում և ցերեկային ժամերին և խուսափել աշխատանքները գիշերային ժամերին իրականացնելուց,
- շին մեքենա-սարքավորումները ապահովվելու են աղմկակլանիչներով,
- ենթածրագրի ողջ ընթացքում բողոքների արձագանքման մեխանիզմի ներդրում,
- անվտանգ երթևեկության և հետիոտնային անցումների ապահովում:

Բնապահպանական և սոցիալական մեղմացման միջոցառումների վերահսկողությունը կիրականացվի ՀՏՀ կողմից դաշտային մշտադիտարկման միջոցով: ՀՏՀ բնապահպանական և սոցիալական մասնագետները պատասխանատու կլինեն ՀՏՀ ղեկավար կազմին տեղյակ պահելու և համապատասխան միջոցառումների առաջարկներ ներկայացնելու համար ցանկացած նշանակալի խնդիրների ի հայտ գալու դեպքում, որոնք կբացահայտվեն դաշտային մոնիթորինգի արդյունքում:

Ներկայացվող գործունեության այլընտրանքային տարբերակ դիտարկվել է ենթածրագրի չիրականացման կամ «գրոյական տարբերակը», այսինքն՝ Գյումրու «Կումայրի» պատմական կենտրոնի փողոցների ներկա վիճակի պահպանումը, ինչը ենթադրում է:

Այսպիսով ենթածրագրի չիրականացման կամ «գրոյական տարբերակի» դեպքում բացասական ազդեցություններն զգալիորեն գերազանցում են վերականգնման արդյունքում ակնկալվող բնապահպանական և սոցիալական բացասական ազդեցությունները, որոնք քննարկվում են սույն հաշվետվությունում: Բացի այդ գործունեության ներկայացվող տարբերակը հիմնավորվում է նաև նրանով, որ հաշվի են առնել պատմամշակութային տարածքում իրականացնելու հանգամանքը՝ որոշվել է վերականգնել «Կումայրի» արգելոցի պատմական տեսքը, այսինքն գոյություն ունեցող ասֆալտապատ լուծումները փոխարինել սալապատ նախագծային լուծումներով:

Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը, ՀՀ բնապահպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումներից ստացված կարծիքները, իրականացված հանրային քննարկումների արդյունքները, ինչպես նաև փորձաքննության գործընթացում ի հայտ եկած դիտողությունների ու առաջարկությունները կարելի է անել հետևյալ եզրահանգումներ:

«Գյումրու Կումայրի պատմական կենտրոնի փողոցների վերականգնում» ենթածրագրի շրջանակներում շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում ակնկալվող հնարավոր բացասական ազդեցությունները կլինեն աննշան, կարճատև և տեղային:

Գյումրու «Կումայրի» պատմական կենտրոնի փողոցների վերականգնման աշխատանքների ընթացքում ՇՄԱԳ հաշվետվությամբ և նախագծով նախատեսված միջոցառումների արդյունքում տարածքի աղտոտվածությունը՝ շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչներով, կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում: Նախագծում լուծված են կեղտաջրերի հավաքման և հեռացման, աղբահեռացման, մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, աղմուկի մակարդակի, հնագիտության, բարեկարգման հարցերը: Նախատեսված են շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված բավարար միջոցառումներ:

Տարաբնակեցման հավասարակշռված համակարգի ստեղծման և բնակարանային կոնֆլիկտային իրավիճակներից խուսափելու համար ինտենսիվ զբաղված գոտում գտնվող Գյումրի քաղաքի համար (համաձայն հաստատված զբաղված հատակագծի) սահմանված է քաղաքաշինական զարգացման խիստ սահմանափակման հետևանքով տարածքային աճի սահմանափակումով և բնապահպանական հատվածի միջոցառումների կիրառումով (ջրապաշտպան, հողապաշտպան միջոցառումներ, հնձեղակայան ենթակառուցվածքների կատարելագործում, սանիտարական շերտերի սահմանում և



կանաչապատում, կազմակերպչական միջոցառումների համալիր, օրենսդրական դաշտի կատարելագործում):

Փորձաքննական պահանջներ

1. Մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները (մասնավորապես՝ ասֆալտի մնացորդների հավաքման և տեղափոխման, ինչպես նաև վերամշակման իրականացումը լիցենզավորված կազմակերպության միջոցով, հանքավայրերի շահագործում և այլն):
2. Աշխատանքների իրականացման ընթացքում՝ ելնելով տեղանքի յուրահատկություններից, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախագծային փաստաթղթերում և ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական և սոցալական կառավարման ծրագրի պահանջներին, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցից միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, կառուցման և շահագործման հետ կապված բոլոր նորմերը:
3. Բնակելի տների մուտքային հատվածների կազմակերպման և վերանորոգման, մայթերի պատվածքների և հուշարձան-շենքերի հատման ողջ երկայնքով նախատեսվող աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել նվազեցնելով կամ բացառելով հնարավոր ազդեցությունները և պատճառվող անհարմարավետությունը:
4. Շինարարության ընթացքում առաջացած շինադրբի, կենցաղային աղբի հեռացումը, ինչպես նաև ջրօգտագործումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
5. Գործունեության ընթացքում իրականացվող շրջակա միջավայրի բաղադրիչների (ջուր, օդ, հող և այլն) մոնիթորինգի, հետնախագծային միջոցառումների իրականացման ծրագիրը և վերլուծության հաշվետվությունը պետք է հասանելի լինի պետական շահագրգիռ մարմինների և հասարակայնության համար:
6. Շինանյութերի և թափոնների տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել փակ ծածկ ունեցող բեռնատար ավտոմեքենաներով՝ քաղաքի և հարակից բնակելի տարածքում փոշու արտանետումները նվազեցնելու համար:
7. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել և ավարտել օրվա սահմանված ժամին՝ բնակելի տարածքներում աղմուկի և առավելագույն բեռնվածությամբ աշխատանքային ժամերի ավելացումից խուսափելու համար:

ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ>> կողմից ներկայացված <<Գյումրու <<Կումայրի>> պատմական կենտրոնի փողոցների վերականգնում>> աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Գլխ. մասնագետ՝

Ա. Դոնոյան

Կ. Մովսիսյան

